

## Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերին և Ներքրդին

Կից ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը, համապատասխան ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, որոնք թաղված են 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար «ՎՏԲ-Հայաստան Բանկ» Փակ Բաժնետիրական Ընկերության (այսուհետ՝ Բանկ) աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից: Մենք տվել ենք դրական աուդիտորական եզրակացություն 10 ապրիլի 2012թ. թողարկված այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր աուդիտորական հաշվետվությունում:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կողմից պահանջվող Բանկի՝ աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների բոլոր բացահայտումները: Այդ իսկ պատճառով ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն փոխարինում Բանկի աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները:

### Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու համար:

### Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ուղղությամբ աշխատանքներ» Աուդիտի միջազգային ստանդարտին (ԱՄՄ 810) համապատասխան իրականացրած ընթացակարգերի հիման վրա ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացության արտահայտումը:

### Եզրակացություն

Մեր կարծիքով, 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար Բանկի աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններից թաղված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստված ֆինանսական հաշվետվություններին:

«Էրնսթ և Իգ Յանգ» ՓԲԸ

10 ապրիլի 2012թ.

Աուդիտի Բաժնի հիմնադիր գործընկեր

Ս. Տարսյան

Գլխավոր տնօրեն՝ Մ. Ալեքսանդրյան ի դեմս  
 լիազորված անձ Է. Հարսյանյանի (գործող 01.09.11թ.  
 տրված լիազորագրի հիման վրա)

Է. Հարսյանյան